Զօկէնտէրէ, Էգէպատ, Քօփրի, Գոմաձոր, Առուճագրակ, Ղարաքիլիսա, Ղզըլճան, Առմուտլու, Ջառափխան, Կաղզուան, Պաշգչլա, Շարիար՝ Մարտ 10ին կը մտնէ Էջմիածին (Թղ. 103բ)։

1688 Մարտ 10էն **1690** Յունիս 2 Էջմիածին և մերձ Երևան ու շրջակաները՝ Երևանու անապատ, Ս. Գէորգայ վանք, Սաղմոսավանք, Ոհանավանք, Սերկեւլի, Լուսաւորչի աղբիւր, Գառնոյ ջուր, Քանաքեռ, Զօրագեղ, Գառնի, Տըրդատայ թախթ, Պաղաղբիւր, Հաւուց Թառ, Ամենափրկչի վանաց մերձ Յովսէփայ նոր վկայի եկեղեցին, Ս. Կարապետ եկեղեցին, Աղջոց վանք, Գեղարդ, Կամրեգ, Ղըրխպուլախ, Գետարգել, Առինճ, Փարաքար, Քուլթափա (Թղ. 103բ-134ա)։

Ամդեցի Էջմիածին գտնուած ատեն Եղիազար կաթ.ի և Նահապետ վրդ.ի հետ խորհրդակցութիւններ կ'ունենայ իր Երուսաղէմի պատրիարքութեան մասին և կ'որոշուի որ ինք այդ պաշտօնով երթայ Երուսաղէմ։ 1690 Յունիս 2ին կը մեկնի Էջմիածինէն, կը հանդիպի Հռիփսիմէ, Մուղնի, Ոհանավանք, Սաղմոսավանք, Ղզըլպուրուն, Խանպապ, Ղփչախ, Ղօշավանք Անի, Բաղգբերդ, Սուպաթան, Ղույուճուխ, Ղարս, Պաճչիք սար, Ըխըխգումպէթ, Մժնկերտու եայլա, Մժնկերտ, Շողջուր, Աղապգեղի ձոր, Վաղժվան, Էգէպատ, Հասանղալա, Պօլամաճ, Տէվէպօյնի, Մուտռկայ վանք, Հնծուց վանք, Թփանճ, և Յուլիս 2ին կը հասնի Էրզրում ու հոն կը մնայ մինչև Յուլիս 31 (Թղ. 134ա-136ա)։

Յուլիս 31ին կը մեկնի Էրզրումէն. կը հանդիպի Աղփունար, Կէղ, Իլիճա, Նէրտիվէն, Աշխալա, Շողայինու ձոր, Ղըզըլտէվրէնտ, Ճինտէրէսի, Աղտօղան, Ղարաղուլախոյ չայիր, Ղարաղուլախ, Օթլիպէլ, Ալմալի գեղ, Սօքման, Կարմրի, Մաչիթլի, Սարուճլար, Կուչուկտիքման, Մեծ Տիքման, Քօփրախղալա, Աղափայի ղարագլուխ, Թուրքմանքօյի, Ածպտերու չայիր, Քրթանոս, Մշակնոց, Անդրիաս, Վախուտ լեառն, Պէկէնտուր, Թօղանլի, Ալմուսա, Ղատիքօփրուսու, Շքլարոյ գետ, Մամօյի գեղ, Կօմանա, Պուռունի բարտիք, Սրաճ և Օգոստ. 30ին կը հասնի Եւդոկիա ու հոն կը մնայ մինչև Նոյեմբեր 10 (Թղ. 136ա-139բ)։

Նոյեմբեր 10ին կը մեկնի Եւդոկիայէն ցամաքային ճամբով դէպի Կ. Պոլիս. կը հանդիպի՝ Ղալաճուխ գեօղ, Թուրհալոյ չայիր, Էյնապազար, Ամասիա, Եօղուրտճի, Հաճիքօյ, Օսմանճուխ, Հաճիհամզա, Թօսիա, Ճիվապաղլարի, Ղօչհիսար, Ղարաճօրան, Ղարաճալար, Չէրքէզ, Պայանտուր, Ղատիպէլի,